

գտնուի խորունկ հեղեղատի մը մօտ, ճանապարհին ձախ կողմը: Քողիբայէն մինչեւ Երիքով հինգ վերստ է: Քողիբայի հեղաղատը սեպացեալ ժայռերէ կազմըւած ձոր մ'է: Այդ ժայռերուն մէջ քարայրներ կան, ուր երբեմն կը բնակէին անապատականներ, որոնք հաստատած են հոն վանք մը, զոր յոյները կ'անուանէին Քողիբա, իսկ արաբական անունն էր Տէյր եղ Քիդդ: Վանքին մէջ, հին դարերէ սկսեալ, պատերուն վրայ գոյութիւն ունեցող և Ս. Կուսի հօր՝ Ս. Յովակիմայ պատկերները կը վկայեն թէ վանքը կառուցուած է անոր անունով: Յակոբոս առաքելոյն անվաւերական աւետարանին մէջ կը կարգանք թէ Ս. Կուսի հօր՝ Յովակիմայ անգաւակութեան եւ մօր՝ Աննայի ամուլութեան պատճառաւ սրտաբեկութիւն մը կար Ս. Կուսի ծնողաց տան մէջ: Յովակիմ երբ զո՛հ մատուցանելու համար տաճար կը դիմէ, ան տխրութեամբ համակուած՝ կուզէր անապատ քաշուիլ եւ առանձնանալ: Ինքը Երուսաղէմացի էր և Յուդայի ցեղէն. հարուստ էր և ունէր բազմաթիւ հօտեր: Հրեշտակը անապատին մէջ աւետեց Յովակիմայ Ս. Կուսին ծնունդը. միեւնոյն ներշնչմամբ լեցուած՝ Աննան ալ կը սպասէր Տաճարին դրան առջեւ. ամուլութեան եւ անգաւակութեան նախատինքը այլ ևս վերցուած էր անոնցմէ:

Եպիփան Երուսաղէմացի այս վանքի աւանդութեան մասին ճշգրիտ տեղեկութիւններ կուտայ, իր նկարագրութիւնը գրեթէ ԺԲ. դարէն կը սկսի: Եպիփան՝ երկրաւոր դրախտը կը զնէր Քողիբայի դիմացը. «Բեթանիոյ արեւելեան կողմը, տասներկու մղոն հեռու, եկեղեցի մը կար, այն տեղին վրայ՝ ուր Ազամ եկած էր նստիլ՝ ողբալու համար երկրաւոր դրախտը կորսընցուցած ըլլալուն հետեանքով»: Ան յետոյ կ'աւելցնէ